Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԾՁԲ-22/4-S ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

09 02 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Ալոյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ս. Ասրյանը և Գ. Մելիքսեթյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման շինարարական աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ՋԿ-ԳՀԾՁԲ-22/4-S ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2022 թվականի փետրվարի 4-ին, ժամը 16:00-ին:

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/4-S ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«ՌԻՋԻԴ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիկի մարզ, գ. Գեղամավան 2-րդ փ. 3-րդ նրբ. 25տ. հեռ. 093355787	rigidalgroup@gmail.com
«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, գ. Ուստան, Թեիլերյան 14 հեռ. 043 600090	gritig@inbox.ru

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 նախահաշվային արժեք – 7 111 900 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) Տեխնիկական հսկողության ծառայություններ - SCADA համակարգով հագեցած ջրաչափական				

	սարքավորումների տեղադրման շինարարական աշխատանքների			
	«ՌԻՋԻԴ» ՍՊԸ	4 700 000	-	4 700 000
	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	9 900 000	-	9 900 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը.

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/4-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված չեն <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշով սահմանված՝ առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, արտոնագիր և այլն) պատճենները և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով սահմանված՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող հինգ տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/4-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 3-ում ներառված մասնագետների աշխատանքային փորձի ժամանակահատվածը բոլոր չորս մասնագետների համար նշված է 3 տարի, սակայն չի նշված տարեթվերը:

Մասնակից «ՌԻՋԻԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված աշխատակազմում ներառված (Հավելված 3) Վալերիկ Ղազարյանի և Դերենիկ Վարդանյանի որակավորումները չեն համապատասխանում Հրավերով պահանջվող մասնագետների որակավորմանը (ինժեներ-հիդրոտեխնիկ), սխալ է լրացված «գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը» սյունակը և Միեր Ոսկանյանի և Էդվարդ Երիցյանի համար նշված չեն գործատուների անվանումները:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/4-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ՌԻՋԻԴ» ՍՊԸ-ի և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակիցներ «ՌԻՋԻԴ» ՍՊԸ-ին և «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը (մինչև 11.02.2022թ. ժամը 18:00) շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ		Գ. Ալոյան
անդամներ		Ս. Ասրյան
		Գ. Մելիքսեթյան
Քարտուղար		Ա. Սարգսյան